«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ <<Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը <<Գրականություն>> առարկայի դասավանդման ընթացքում>>

Առարկան՝Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝Մարինե Խաչատրյան

Ուսումնական հաստատություն՝ «Բջնիի Հովհ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ

Երևան 2022

Բովանդակություն

1 .Ներածություն……..3

2 .1.Արժեհամակարգ……..5

3.1.1Արժեքների ընկալումը, դրանց կարևորությունը կրթական համակարգում……15

4 .1.2Արժեքային համակարգի ձևավորման վրա ազդող գործոնները,դրանց դրսևորումը ուսուցման գործընթացում…….20

5.Եզրակացություն……24

6.Գրականության ցանկ……..26

Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ , կործանվում դրա պակասի պատճառով :

Հայրենապաշտական դաստիարակություն . ահա մեր փրկության խարիսխը :

Գարեգին Նժդեհ

Ներածություն

Հանրակրթության պետական չափորոշիչով պայմանավորված հստակ պահանջներ են ներկայացված սովորողի արժեքային համակարգի ձևավորման համար, որի բաղկացուցիչ մասն են կազմում աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակության, ազգային հոգևոր արժեքների գնահատման սկզբունքները:

Աշխատելով դպրոցում `ես անընդհատ վախենում եմ ժամանակավրեպ լինելուց:Գործիքներն ու տեխնոլոգիաները փոխվում են, նորանում :Այսօր պետք է բացահայտենք երեխաների հետաքրքրությունները, ընձեռել լայն հնարավորություններ:

Նոր չափորոշչային պահանջներով առավել կարևորվում են կարողունակություններով օժտված անհատները: Կարողունակությունների հիմնական բաղադրիչներից են ոչ միայն գիտելիքն ու հմտությունները , այլև արժեքը և վերաբերմունքը: է Բարձր արժեքային համակարգ ունեցող, կիրթ և բազմակողմանի զարգացած քաղաքացին վաղվա ապագան է, իսկ արժեքային համակարգի՝ դպրոցում պատշաճ կերպով յուրացումը դրա հիմնական ճանապարհը: Հետազոտության թեման ընտրել եմ քանի որ **խնդիր** է մարդու օտարումն իր էությունից : Տվյալ աշխատանքիս **նպատակն** է վերլուծել արժեքային համակարգի ձևավորման առանձնահատկությունները իրագործելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- սահմանել արժեքային համակարգ հասկացությունը,
- ներկայացնել արժեքների հիմնական տեսակները,

- դուրս բերել արժեքային համակարգի ձևավորման վրա ազդող հիմնական գործոնները,
- վերլուծել կրթական համակարգի դերը անձի արժեքային համակարգի ձևավորման գործում,
- ուսումնասիրել արժեքային համակարգի ձևավորման առանձնահատկությունները «Մայրենի», «Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաների շրջանակներում,
- Հետազոտության **նպատակներից է նաև** տարբեր հնարների, մեթոդների համադրմամբ ու կիրառմամբ սովորողների արժեհամակարգի ձևավորումն է, վերլուծական կարողությունների, քննադատական մտքի զարգացումը, որ մարդը չվերածվի միայն տնտեսական արժեք ունեցող մարդկային կապիտալի՝ անձնային թույլ որակներով, մարդկային պարզունակ ընկալումներով:
- Թեման **արդիական** է, քանի որ տեխնիկական հեղաշրջման այս հարափոփոխ դարում, երբ ամեն ինչ մեքենայացվում է, թվայնացվում, այժմ գերիշխող է անհատի էգոն: Հաճախ նայում ենք, բայց չենք տեսնում, զգացմունքները բթանում են, բովանդակությունից առավել կարևորում ենք ձևը, սիրուն փաթեթավորումը: Մինչդեռ փոխհարաբերություններում կարևոր են մարդկայինը, խիղճը արթուն պահելը, ազնվությունը, անարդարությանն արձագանքելը, հանդուրժողականությունը, կարեկցանքը, գութը, :

Արժեհամակարգ

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ պետական չափորոշչում որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ:Յուրաքանչյուր ուսումնական առարկայի Մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացնել գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը,որոնք պետք է տա դպրոցը:

- «Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:
- ան գործումլուրջ անելիքներ ունի հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն
- հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության կազմակերպման համար շատ կարևոր է ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի մեջ:Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի համար ճիշտ է

բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված

- են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները:
- Հայ ժողովրդի ձևավորման պահից ի վեր մարդկային հասարակությունը միշտ հիմնված է եղել որոշակի կանոնների, համոզմունքների և արժեքների վրա: Արժեքները անձի կառուցվածքի կարևորագույն բաղադրիչներից են. սոցիալ-հոգեբանական այլ կազմավորումների հետ միասին դրանք անձի վարքագծի կարգավորիչներ են: Արժեքները ունեն երկակի բնույթ. մի կողմից դրանք խիստ անհատական են, քանի որ պարունակում են կոնկրետ անձի կենսափորձ, իսկ մյուս կողմից՝ սոցիալական, քանի որ մեծ առումով պայմանավորված են տվյալ հասարակության պատմական և մշակութային առանձնահատկություններով: Այսպիսով, արժեքը կյանքի և աշխարհի յուրատեսակ ընկալում է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա: Անձի արժեքների համախմբությունը կազմում է մեկ ամբողջական համակարգ, որն ապահովում է անձի ներդաշնակ և բազմակողմանի ձևավման ու զարգացման գործընթացը:
- Երեխայի կյանքում արժեքները հայտնվում են տարբեր կերպ. որոշ դեպքերում դրանք աստիճանական հասունացման հետևանք են, իսկ երբեմն դրանք հայտնվում են հանկարծակի, հայտնության նման:
- Ուսուցումը ոչ միայն գիտելիքների փոխանցման, այլև տվյալ հասարակության մեջ ընդունված և կարևոր արժեքային համակարգի փոխանցումն է սերնդեսերունդ: Այս առումով, կրթական ոլորտի, մասնավորապես դպրոցի դերն անձի արժեքային համակարգի ձևավորման և զարգացման գործում անփոխարինելի է: Դպրոցական հասակում անձի յուրացրած արժեքներն ունեն առավելագույն կարևորություն, քանի որ հենց այդ տարիքում են

նրա մոտ ձևավորվում բարու և չարի, ճշմարտության և ստի, արդարի և անարդարի մասին առաջին պատկերացումները, որոնք հետագայում հիմք են դառնում ճշտապահության և պատասխանատվության ձևավորման, արդարամտության, հայրենասիրության, հանդուրժողականության, սիրո և ներդաշնակության և մի շարք այլ հատկանիշների ձևավորման համար:

Բարձր արժեքային համակարգ ունեցող, կիրթ և բազմակողմանի զարգացած քաղաքացին վաղվա ապագան է, իսկ արժեքային համակարգի՝ դպրոցում պատշաճկերպով յուրացումը դրա հիմնական ճանապարհն է:

Երեխայի կյանքում արժեքները հայտնվում են տարբեր կերպ. որոշ դեպքերում դրանք աստիճանական հասունացման հետևանք են, իսկ երբեմն դրանք հայտնվումեն հանկարծակի, հայտնության նման:

Ուսուցումը ոչ միայն գիտելիքների փոխանցման, այլև տվյալ հասարակության մեջ ընդունված և կարևոր արժեքային համակարգի փոխանցումն է սերնդեսերունդ: Այս առումով, կրթական ոլորտի, մասնավորապես դպրոցի դերն անձի արժեքային համակարգի ձևավորման և զարգացման գործում անփոխարինելի է: Դպրոցական հասակում անձի յուրացրած արժեքներն ունեն առավելագույն կարևորություն, քանի որ հենց այդ տարիքում են նրա մոտ ձևավորվում բարու և չարի, ճշմարտության և ստի, արդարի և անարդարի մասին առաջին պատկերացումները, որոնք հետագայում հիմք են դառնում ճշտապահության և պատասխանատվության:

Բարձր արժեքային համակարգ ունեցող, կիրթ և բազմակողմանի զարգացած քաղաքացին վաղվա ապագան է, իսկ արժեքային համակարգի՝ դպրոցում պատշաճ կերպով յուրացումը դրա հիմնական ճանապարհը: Արժեքները բավարարում են անձի կենսական պահանջմունքները և իմաստավորում նրա կյանքը: Ուսուցման, համակողմանի զարգացման և կենսափորձի կուտակման գործընթացում մարդու մոտ ձևավորվում է ինքնուրույն ընտրելու և գործելու ունակություն, ինչը մեծ առումով պայմանավորված է արժեքներով: Յուրաքանչյուր մարդու գիտակցության մեջ անձնական արժեքներն արտացոլվում են սոցիալական, արժեքային

կողմնորոշումների տեսքով, որոնք փոխաբերական իմաստով կոչվում են «գիտակցության առանցք», որն ապահովում է անհատի կայունությունը: Արժեքային կողմնորոշումները աստիճանակարգված, փոխկապակցված արժեքների որոշակի համախմբություն են, որոնք սահմանում են մարդու կյանքի գործունեության ուղղությունը:

Արժեքները անձի ներքին կառուցվածքի ամենակարևոր տարրերն են, որոնք ամրագրված են անհատի կյանքի փորձով, նրա փորձառությունների ամբողջությամբ և սահմանում են տվյալ մարդու համար կարևորը՝ սահմանազատելով էականը աննշանից: Սոցիալ-հոգեբանական այլ կազմավորիչների հետ մեկտեղ արժեքները անձի վարքագծի կարգավորիչներ են և դրսևորվում են նրա գործունեության բոլոր ոլորտներում: ընդհանուր մարդկային արժեքներ, որոնք պայմանավորված են համընդհանուր պատկերացումներով «լավի» և «վատի» Մշակութային արժեքներ, որոնք ձևավորվում են ընդհանուր ընդունված նորմերի հիման վրա, թե ինչն է «լավը», ինչը «վատը»: Արժեքների այս խումբը զգալիորեն պայմանավորված է մշակութային և կրթության զարգացման առանձնահատկություններով:

- Անհատական (կամ անձնական) արժեքներ, որոնք հիմնված են անհատական հատկանիշների և աշխարհայացքի վրա, և հետևաբար շատ սուբյեկտիվ են:

Գ.Ռիկերտն առաջարկում է բաժանել բոլոր արժեքները 6 խմբի.

- տրամաբանական (գիտական նվաճումների արժեքներ),
- գեղագիտական (արվեստի հետ կապված արժեքներ),
- միստիկական կամ առեղծվածային (պաշտամունքների հետ կապվածարժեքներ),
- կրոնական արժեքներ,
- բարոյական արժեքներ,
- անձնական արժեքներ:

Մյունստերբերգի առաջարկած արժեքների դասակարգումը հոգեբանության մեջ հնարավորություն է տալիս մարդկանց

առաջնահերթությունները բաժանել երկու տեսակի.

- Կենսական արժեքներ, որը ներառում է մարդկային զգացմունքները՝ սեր, երջանկություն, ուրախություն և այլն:
- Մշակութային արժեքներ և նորմեր, որոնք միավորում են ոչ միայն նյութական, այլև հոգևոր շահերը, որոնք ունեն մեծ արժեք մշակույթի մեջ:

Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձևավորվում է դրանց շնորհիվ: Էթիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար. դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի: Դրանք տարբեր են ոչ միայն տարբեր հասարակություններում, այլև անգամ հասարակության տարբեր շրջանակներում, նույն երկրի տարբեր տարածքներում: Եթե էթիկական նորմերը ծառի արմատներն են, իսկ արժեքները՝

Անձի արժեքների համակարգը ձևավորվում է սոցիալականացման ընթացքում ներքնայնացման (ինտերիորիզացիայի)՝ հասարակական-քաղաքական, բարոյական,գեղագիտական իդեալների (հասարակական փորձ և մշակույթ) յուրացման միջոցով, որոնք բնորոշ են տվյալ սոցիալական հանրությանը: Արժեքային համակարգի ձևավորումն ընթանում է դաստիարակության և կրթության ընթացքում սոցիալական փորձի յուրացման միջոցով:

Արժեքային համակարգի ձևավորումն անհնար է ներկայացնել հասարակությունից, մարդկանց հետ շփումից անջատ: Եվ չնայած այն հանգամանքին, որ արժեքային համակարգը հասարակության զարգացման և ձևավորման տարբեր փուլերում ենթարկվել է փոփոխության, այնուամենայնիվ բոլոր ժամանակներում դրանում առկա են եղել որոշակի պարամետրեր, որոնք արդիական են առ այսօր և հաստատուն արժեքներ են: Օրինակ, բոլոր ժամանակներում և ցանկացած հասարակությունում հավատարմությունը համարվում է կարևոր արժեք: դրանք ձևավորվում են կյանքի որոշակի ժամանակահատվածի

ընթացքում. որքան ավելի հասուն է դառնում մարդը, այնքան ավելի կայուն արժեքներ են ձևավորվում
նրա մոտ:

Վերլուծելով անձի իմաստային ոլորտի ձևավորման և զարգացման խնդիրը՝ Դ. Լեոնտևը նշում է, որ յուրաքանչյուր անձի զարգացման գործընթաց բնութագրվում է սոցիալական հանրության արժեքների և դրանց փոխակերպումների, այսինքն՝ անձնային արժեքների կերպափոխմամբ:

Անձնային արժեքների ձևավորման հիմնական նախադրյալներ են.

- սոցիալականացման առանձնահատկությունները,
- տարիքային զարգացման փուլերը,

Այսպիսով, արժեքային համակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքային համակարգը նպաստում է անձի վարքի կայուն դրսևորումներին՝ թույլ տալով նրան առանձնացնել առաջնայինը երկրորդականից, կարևորն անկարևորից: Առհասարակ արժեքն անհնար դիտարկվում է անձի կայացման և սոցիալականացման գործընթացների հետ փոխկապկված: Անձի արժեքները հիմնականում ձևավորվում են մանուկ հասակից, իսկ հասուն տարիքում նրանք ազդում են մարդկանց գործողությունների, նրանց որոշումների կայացման և անձնական ընտրության վրա: Անձի արժեքային համակարգը ձևավորվում է կոնկրետ սոցիալ-պատմական պայմաններում՝ արտահայտելով որոշակի հասարակության ժամանակակից արժեքները, որոնք իրենց հերթին պայմանավորված են ընդհանուր պատմական և մշակութային մի շարք գործոններով: Անձի արժեքային համակարգի ձևավորման մասին խոսելիս անհնար է անտեսել կրթության դերն այդ գործընթացում. գալիք սերնդի մոտ արժեքային համակարգի ձևավորումը կարևոր է ոչ միայն առանձին անհատների, այլև ողջ

հասարակության ապագայի համար: Ջ. Ռոդարին իր «Ստեղծագործական երևակայության քերականություն» աշխատությունում գրում է, որ «ըստ էության կա մեկ առարկա՝ կյանքը, իրականությունը, որը բոլոր տեսանկյուններից է դիտարկվում իր ողջ բազմազանությամբ՝ սկսած դպրոցից, միասին լինելու հմտությունից, այն բանի ըմբռնումից, թե միասին ինչպես է պետք ապրել ու աշխատել: Այսպիսի դպրոցում երեխան արդեն մշակույթ և այլ արժեքներ սպառող չէ, այլ արարողը»:

Երբ փլուզվում է արժեքային համակարգը, խախտվում են համակեցության և բարոյականության բոլոր կանոնները, հասարակությունն անկում է ապրում, մարդկային կյանքը՝ իմաստազրկվում: Նման իրավիճակից խուսափելու համար անհրաժեշտ է, որ կրթության գլխավոր նպատակը լինի անձի արժեհամակարգի ձևավորման համար ամուր հիմք ստեղծելը: Դպրոցում անձը սկսում է ընկալել ինքն իրեն որպես սոցիալական էակ, սկսում է ապրել՝ ուրիշների հետ համակցված, ստանում է նախնական գիտելիքներ թույլատրելիի և անթույլատրելիի մասին, որոնք հիմք են հանդիսանում նրա հետագա արժեքային համակարգի ձևավորման համար: Դպրոցական արժեքներ այն նորմերն ու վարքագիծն են, որոնք առաջնորդում են երեխաներին դպրոցում: Այլ կերպ դպրոցի արժեքները ձևավորված համոզմունքներ են, որոնք թույլ են տալիս երեխային դրսևորել որոշակի վարքագիծ սոցիալական միջավայրում:

Դպրոցական արժեքներն ունեն մի շարք առանձնահատկություններ.

- **դրանք համընդհանուր են.** արժեքները կարող են տարբեր լինել՝ կախված մշակույթներից կամ ազգերից, բայց քիչ թե շատ միատարր ձևով, դպրոցական արժեքները նույնն են աշխարհի դպրոցների մեծ մասում:
- **Դրանք կայուն են.** չնայած դպրոցական արժեքները սովորում կյանքի միայն առաջին տարիներին, սակայն դրանց նշանակությունը հավերժ մնում է անհատի հիշողության մեջ:
- **Դրանք կարող են լինել և՝ անհատական, և՝ կոլեկտիվ.** որոշ

արժեքներ կարող են կրել առանձին աշակերտներ, իսկ որոշները՝ ամբողջ դասարանը:

- **Դրանք պատմական են.** դպրոցական արժեքները չեն ձևակերպվում միանգամից, այլ՝ տարիների ընթացքում:
- **Դրանք ինքնություն են.** դպրոցական արժեքների կիրառումը որոշակի փոփոխության է ենթարկում աշակերտների ինքնությունը, արժեքային դատողությունները և իրականության ընկալումը:
- **Դպրոցական արժեքների հիմնական նպատակն է նպաստել մարդու վարքը վաղ տարիքից առաջնորդելուն որպես մարդ՝** հասցնելով սոցիալական աճի և կատարելագործման:

Պետք է նկատել, որ աշակերտը ոչ միայն արժեքներ յուրացնող է, այլև արժեքներ ստեղծող: Երեխան դպրոց է մտնում որոշակի անհատական արժեքներով, որոնք սկսում են աստիճանաբար դրսևորվել թե' ուսման գործընթացում, թե' համադասարանցիների և այլ անձնաց հետ շփման մեջ: Այսպիսով, մի կողմից դպրոցը նպաստում է նրա մոտ արժեքային համակարգի ձևավորմանը, մյուս կողմից աշակերտն ինքն է մասնակցում մյուսների արժեքային համակարգի ստեղծմանը: Օրինակ, ճշտապահությունը արժեք է, որը կախված է կոնկրետ աշակերտից, մինչդեռ ընկերակցությունը՝ խմբից:

Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, որտեղ գործում են կայուն և հաստատուն արժեքներ, որոնց աշակերտները սովորում են համապատասխանել: Աշակերտը պետք է ոչ միայն լսի և կարդա արժեքների մասին, այլև տեսնի դրանցկոնկրետ դրսևորման օրինակներ. օրինակ, երբ ուսուցիչը հոգատարություն կամ օգնություն է ցուցաբերում որևէ աշակերտի հանդեպ, ամենևին կարիք չկա, որ նա ներկայացնի դա բառերով: Երեխաները գործնականորեն տեսնում և յուրացնում են այդ արժեքները: Այսպիսով, արժեքային համակարգի ձևավորման համար բավարար չէ, որ աշակերտին ներկայացվեն կամ պարտադրվեն որոշակի արժեքներ. երեխանի պետք է ընկալի դրանց իմաստը, գիտակցաբար յուրացնի և ընդունի դրանք: Օրինակ, ազնվությունը և

պարտաճանաչությունը արժեքներ են, որոնք կախված են կոնկրետ աշակերտի անձնական որակներից, մինչդեռ համերաշխությունը պայմանավորված է դասարանի որակներով:

Անդրադառնալով դպրոցական արժեքների բազմազանությանը՝ հարկ է նշել նաև, որ դրանց մի մասը զգալիորեն կախված է նաև պատմական ժամանահատվածի առանձնահատկություններից. հայ ժողովուրդը շատ զրկանքներու ցավ է տեսել իր գոյության ողջ ընթացքում, այդ իսկ պատճառով հայրենասիրությունը և ազգային մշակույթը մշտապես համարվել են կարևորագույն արժեք: Դրա հետ մեկտեղ ժամանակակից իրականությունը, որը բնութագրվում է գլոբալացման և համընդհանուր ինտեգրման միտումներով, թելադրում է նոր, ոչպակաս կարևոր արժեքներ. այսօր ժողովրդավարությունը, հանդուրժողականությունը, բոլոր մարդկանց իրավահավասարությունը, քաղաքացիական բարձր գիտակցությունը և մի շարք այլ արժեքներ հավասարազոր կարևոր են արդի հասարակությունում բնականոն ապրելու և գործելու համար: Այս իմաստով խիստ կարևոր է հետևել, որ երեխաները ձեռք բերեն գիտելիք, արժեքներներ ու կարողություններ՝ ժամանակակից ժողովրդավարական հասարակարգում պատասխանատու քաղաքացի լինելու համար: Մեր կրթության համակարգերն ու ուսումնական հաստատությունները պետք է ապագա սերնդին պատրաստեն, որ նրանք դառնան ակտիվ, հաղորդակից և պատասխանատու անհատներ: Է՛լ ավելի կարևոր է, որ մեր երեխաները օ օժտվեն այնպիսի արժեքներով, վերաբերմունքով, հմտություններով, գիտելիքներով ու քննադատական ըմբռնմամբ, որոնք նրանց հնարավորություն կտան կայացնել իրենց ապագայի վերաբերյալ:

Այսպիսով, աշխարհի հանդեպ մարդու վերաբերմունքը պայմանավորված է նրա գիտակցությամբ, իդեալներով, բարոյական համոզմունքներով և արժեքներով: Աշխարհի արժեքային-իմաստային յուրացման ընթացքում մարդը որոշակի գնահատողական վերաբերմունք է ձեռք բերում, իմաստավորում իր տեղն ու դերը կյանքում, արժևորում որոշակի երևույթներ ու գործընթացներ: Չնայած պատմամշակութային

յուրաքանչյուր ժամանակաշրջան իր կնիքն է դնումարժեքային ընտրության և դիրքորոշման վրա, այնուհանդերձ գոյություն ունեն համամարդկային անանց արժեքներ, որոնք կարգավորում են համայն մարդկության կենսագործունեությունը՝ որպես համընդհանուր նորմեր, չափանիշներ, բարոյական-արժեքային կողմնորոշիչներ:

Յուրաքանչյուր անձի արժեքային համակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում:

Դպրոցը ազգային և ժողովրդավարական արժեքների փոխացման կարևորագույն կառույց է, որի վրա դրված է ապագա սերնդի մեջ ճշմարիտ արժեքների ձևավորման և զարգացման պարտականությունը: Կայուն և զարգացած արժեքային համակարգի ստեղծման համար պետք է պատասխանել հետևյալ հարցերին. ի՞նչ արժեքներ են 21-րդ դարում առավել արդիական և կարևոր, ի՞նչ արժեքներ են մղվել հետին պլան: Առանց այս հարցերի պատասխանների կրթության գործընթացը կլինի տարերային, կկրի վերացական բնույթ և չի իրականացնի իր առջև դրված խնդիրը: Իսկ քանի որ հետագա սերնդի բարոյահոգեբանական պատկերի ձևավորման մեջ դպրոցը համարվում է առաջնային կառույց, արժեքների ձևավորմանը պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել և հավուր պատշաճի իրականացնել այդ գործընթացը. առողջ հոգեբանություն ունեցող և բարձր արժեքներ կրող քաղաքացին երկրի ապագայի և զարգացման հիմնական երաշխիքն է: Աշակերտի արժեքային համակարգի ձևավորման ընթացքում խիստ կարևոր է դասի ինտերակտիվությունը. որքան ավելի ներգրավված է երեխան, այնքան ավելի լավ կտպավորվեն նրա մոտ այն գաղափարները և մտքերը, որ ցանկանում ենք նրան հասցնել: Երեխայի ներգրավվածությունն ապահովելու համար կարևոր նախապայմաններից մեկը դասարանների փոքրաթիվ լինելն է. մեծաթիվ դասարաններում ուսուցիչը ֆիզիկապես չի կարողանում հավասար ուշադրություն հատկացնել յուրաքանչյուր աշակերտին, շարժել նրա հետաքրքրությունը, փորձել նոր մեթոդներ և

եղանակներ: Որոշ արժեքների մասին խոսելիս ցանկալի կլիներ ցուցադրել երեխաներին տվյալ արժեքի հետ կապված սահիկներ, ֆիլմերից հատվածներ, տեսանյութեր: Օրինակ, բոլոր մարդկանց հավասարության, հանդուրժողականության, մեծերի նկատմամբ հարգանքի մասին խոսելիս դիտել փոքրիկ ներկայացումներ, սովորեցնել հարգել մեծերին: Հետևաբար կարևոր նախապայմաններից մեկն էլ ժամանակակից տեխնոլոգիական միջոցների առկայությունն է. ժամանակակից աշակերտները տեխնոլոգիական առաջընթացի պայմաններում չեն բավարարվում զուտ խոսքային տեղեկատվությամբ: Արժեքները, դրանց իմաստն ու կարևորությունը ներկայացնելն ու մեկնաբանելը շատ ավելի արագ և պարզ կարելի է ներկայացնել տարբեր աուդիո և վիզուալ մեթոդների օգնությամբ: Այս ամենի արդյունավետ կիրառության արդյունքը կլինեն ոչ թե պարտադրված կամ անգիր արած, բայց աշակերտի համար նշանակություն չունեցող, այլ իրական արժեքները: Միայն այդպես կարելի է բարելավել կրթական համակարգը, ունենալ արդիական և որակյալ դպրոցներ, որոնք կձևավորեն համապատասխան արժեքային համակարգ ապագա սերնդի համար, ինչը կդառնա զարգացած երկիր ունենալու գրավականը:

1.1 Արժեքների ընկալումը, դրանց կարևորությունը կրթականհամակարգում

Երեխաների կրթության մասին խոսելիս՝ մենք հաճախ օգտագործում ենք «արժեքներ» հասկացությունը: Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը գալիք սերնդի մոտ և միգուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում: Փորձենք ձևակերպել, թե ինչ է ի վերջո «արժեք» հասկացությունը: Արժեքն այն երևույթն է մեր կյանքում, որի դիմաց մենք «գին» ենք վճարել: Վճարի տեսակը կարող է տարբեր լինել՝ տվայտանքներ, հույզեր, այլ արժեքների զոհաբերություն, հարազատների, հայրենակիցների կամ նախնիների կորուստ, կորցրած հող, հայրենիք և այլն: Արժեքը հնարավոր չէ

ստանալ հեշտությամբ, այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել: Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ, քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը: Առանց արժեքների կյանքը դատարկ է: Հեշտ, առանց կորուստների եւ հաղթահարումների ապրելն երբեք չի երջանկացնում հենց այն պատճառով, որ չի բերում արժեքների ձեւավորման: Արժեքների մեծմասը սնվում է էթիկական նորմերից, ձևավորվում է դրանց շնորհիվ: Էթիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար՝ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի: Դրանք տարբեր են ոչ միայն տարբեր հասարակություններում, այլև անգամ հասարակության տարբեր շրջանակներում, նույն երկրի տարբեր տարածքներում: Նորմերը տարբեր են քաղաքում եւ գյուղում: Էթիկական նորմերը մեզ թելադրում են վարքագիծ, և որքան դրանք ավելի պահանջկոտ են, այնքան ավելի լուրջ արժեհամակարգ է պետք ձևավորել, որպեսզի մարդը բնականորեն դրանց համապատասխանի: Զարգացած մշակույթները ունեն զարգացած էթիկական նորմեր: Երբ դրանք քայքայվում են, պահանջները նվազում են, առաջանում են արժեհամակարգային խնդիրներ: Ահա թե ինչու առաջին հայացքից անվտանգ թվացող տարատեսակ

«ազատությունները» իրենց հետ մեծ վտանգներ են բերում: Հիմա անդրադառնանք բարոյականությանը: Եթե էթիկական նորմերը ծառի արմատներն են, իսկ արժեքները՝ բույնը, ապա բարոյականությունը դրա սաղարթն է : Բարոյական է այն ամենը, ինչը նպաստում էարժեքների պահպանմանը և չի հակասում դրանց: Անբարոյական է ամենը, ինչը դեմ է արժեքներին եւ բերում է դրանց քայքայմանը: Օրինակ, ցանկացած հասարակության մեջ անբարոյական է դավաճանությունը միայն այն պատճառով, որ այն արժեզրկում է խոստումը: Եթե խոստումն արժեք չլինի, մարդկանց համակեցությունը կվերածվի մղձավանջի, քանի որ կվերանա փոխադարձ վստահությունը: Հենց դրանով է վտանգավոր, օրինակ, կոռուպցիան, քանի որ այն դավաճանություն է հանրությանը տված խոստմանը: Երբ փլուզվում են արժեքները, խախտվում է համակեցությունը եւ տարածվում անբարոյականությունը: Մարդիկ դժբախտանում են, տնտեսությունն անկում է

ապրում, հանցագործությունները դառնում են համատարած, կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը, մարդիկ սկսում են հեշտությամբ իրարկոտորել:

Եթե փորձենք ամփոփել, ապա հենց այս պատճառով է, որ կրթության հենքը եւ գլխավոր իմաստը պետք է դառնա ճիշտ արժեհամակարգի ձեւավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, որտեղ հաստատուն են էթիկական նորմերը, իսկ աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ և այդ պայքարում պարտավոր է հաղթել:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավակային լայն շառավիղով, առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, իմացական, հոգևոր, մշակութային, էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է մարդու մարդու բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը մանկավարժին ոչ հարիր մոտեցում է: Արժեհամակարգը լիակատար է և ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մանսավորապես՝ անգնահատելի է հայոց լեզվի և գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի և օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ:
Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որ յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենիքի նկատմամբ սիրո, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: «Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն

շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեք: Հայոց լեզու և գրականություն (այդ թվում՝ մայրենի) առարկաների ուսուցումը կրթության այն բովանդակության տիրույթնէ, որն ապահովում է սեփական մտքերը հայերեն բանավոր և գրավոր գրագետ խոսքով արտահայտելու, ազատ հաղորդակցվելու, կրթության

առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով, հայ և արտասահմանյան գրականության ստեղծագործություններ, ինչպես նաև ուսումնական այլ առարկաներ ուսումնասիրելու կարողության, ինքնաճանաչողության, աշխարհաճանաչողության, լեզվամտածողության, քննադատական, հուզական-պատկերավոր մտածողության ձևավորումը, զարգացումը և կատարելագործումը ողջ կյանքի ընթացքում:

Նոր սերնդի արժեքային համակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում բավականին լուրջ անելիքներ ունի բնավ հայ դպրոցը (ուսումնական հաստատությունը), որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող

սերունդ: Այդ նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտության ճյուղերը, այլ նաև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն խնդիրներից է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որև մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ: Ուստի 21-րդ դարի ուսումնական հաստատությունում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր դեր ունեն ոչ միայն համամարդկային, այլ հենց հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնադիրումն ու դրանց ուսուցումը: Հենց այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները:

Արժեքային համակարգի ձևավորման նպատակն է, որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝

- ✓ լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին,
- ✓ կարևորի ազգային-պետական մտածողության և գործելակերպ ունենալը, դրսևորի դրան հասնելու ձգտումը,կամք,
- ✓ ունենա ազգային ինքնագիտակցություն,
- ✓ կարևորի ազգային հիմնախնդիրների կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,
- ✓ ունենա արդարության, լավատեսության և պատասխանատվության զգացում,

գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը:

1.2 Արժեքային համակարգի ձևավորման վրա ազդող գործոնները, դրանց դրսևորումը ուսուցման գործընթացում

Նախատեսվում է ,որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝
1,Լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին: 2,Կարևորի ազգային-պետական մտածողության և գործելակերպ ունենալը և դր սևորի դրան հասնելու ձգտում ու կամք:
3. Ունենա ազգային ինքնագիտակցություն
4. Կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը:
5. Ունենա արդարության , լավատեսության և պատասխանատվության զգացում
6. Գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը,
7. Գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը:
8. Գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն. . .

<<Մայրենի>> և <<Գրականություն>> առարկաները լայն հնարավորություն են ընձեռնում արժեքային համակարգի ձևավորման համար: Արժեքների հիմնական բաղադրիչները ներկայացված ենյ բոլոր դարերի գրականություններում և ժանրերում , ինչն ուսուցչին թույլ է տալիս ուսուցման յնթացքում աշակերտների ներկայացնել իրենց տարիքային խմբին համապատասխանբ արժեքներ : Որպես օրինակ վերցնենք հայրենասիրությունը , հայրենիքը մեծագույն արժեք է, իսկ հայրենասիրությունը ՝ սրբազան զգացում: Աշակերտի հայրենասիրության աստիճանը մեծապես կախված է նրանից , թե որքանով է ուսուցիչը կարողանում նրան հասանելի և մատչելի կերպով ներկայացնել այդ գաղափիկ

կարևորությունը հետաքրքրություն առաջացնել նրա մոտ ծանոթանալու իր ազգի պատմությանը և մշակույթի սիրո և երախտագիտությամբ ընդունելու իր ազգի պատմամշակութային ժառանգությունը:

Իսկ վերջին իրադարձությունները , մեր երկրի գլխին կուտակված ամպերն ու արհավիրքները ևս մեկ անգամ ապացուցում են , որ մեր քաջորդիները Հայրենասեր են , ազգասեր , անձնազոհ…

<<Արժեհամակարգ>>հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով:Ընդունված է այն ընկալումը,որ արժեհամակարգը մարդու բարոյական ,գեղագիտական,հոգևոր,իմացական,մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է,որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ ,բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զարգացումը դաստիարակելու համար հայ գրականության դասընթացը լայն հնարավորություն է ընձեռում:Այս առումով կարելի է հիշատակել ավագ դասարանումընդգրկված ծրագրային նյութերը:

Ազգային արժեհամակարգի ձևավորման համար կարևորում եմ Վարդան Մամիկոնյանի և Վարդանանց կերպարը Դերենիկ Դեմիրճյանի <<Վարդանանք>>պատմավեպում՝11-րդ դասարան:

Աշխատելով ավագ սերնդի հետ՝բացահայտել ենք նրանց ինչպես ուժեղ և թույլ կողմերը,այնպես էլ նրանց մոտեցումը ազգային արժեհամակարգին:Մեր առջև դրված նպատակներից են՝

1. Գիտելիքիհամակարգ-Պատմավեպիհիմքը,շարժառիթները,պատմական աղբյուրները,դիպաշարը,կերպարները:

2. Կարողություններ և հմտություններ-ճանաչողության ընդլայնում:Աշակերտները կկարողանան ուսումնասիրել պատմավեպի նյութը,կծանոթանան կերպարների հետ,կկարողանան վերլուծել,համադրել , ընդհանրացնել և վերանայել:

Աշակերտները կծանոթանան 5-րդ դարում կատարված դեպքերին,Հազկերտ 2-րդի հրովարտակին,նրա հայահալած քաղաքականությանը և պարսկական բռնապետության դեմ հայ ժողովրդի մղած ազգային- ազատագրական պայքարին,մասնավորապես սպարապետ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ 451թ,ի մայիսի 26-ին տեղի ունեցած Ավարայրի ճակատամարտի հերոսական դեպքերին ու պատմական իրադարձություններին:

Ստեղծագործական կարողությունների և երևակայության զարգացման դեպքում յուրաքանչյուր աշակերտ կունենա հնարավորություն ստեղծագործաբար կերպարը վերլուծելու,իր տեսակետը հստակեցնելու,երևակայությամբ մտովի 5-րդ դար փոխադրվելու և անձամբ գործողությունների մասնակիցը դառնալու:

Յուրաքանչյուր հետազոտական աշխատանք ունի վերլուծության առանձնահատկություններ:Այս պարագայում,աշխատելով տարբեր տարիքային խմբի աշակերտների հետ,բացահայտել ենք,որ նրանց մոտ ձևավորվել է նոր արժեհամակարգ:Սկսեցին որոշ աշակերտներ ձեռք բերել ժամանակակից գրողների ստեղծագործություններ և ընթերցել:Եղան տղաներ,ովքեր ոգևորվել էին Վարդանի կերպարով և ձգտում էին նմանվել նրան: Եղան աշակերտներ , որ Վասակին էլ հայրենասեր անվանեցին ՝ նրա դիվանագիտական քայլերը հասկանալով և հայր լինելու հանգամանքը/ որդիրները ՝ Բաբիկն ու Ներսիկը պատանդ էին պահվում Հազկերտի մոտ /:

Ճիշտ է, մի քանի աշակերտներ չէին ցանկանում բնագրերը կարդալ,բայց նրանց համար օգտագործվեցին այնպիսի հնարներ,որոնք նպաստեցին լսելով ծանոթանալ նյութերին; Վերջնարդյունքում այդ աշակերտների մոտ որոշակի արժեհամակարգ ձևավորվեց:

Օգտագործել ենք տարբեր հնարներ,մեթոդներ,կիրառվել են ինչպես անցյալի գրականության,այնպես էլ արդի գրողների ստեծգործություններ:

Ավագ դասարանի աշակերտը դպրոցական տարիքի ամենահասուն շրջանում է. նա տասնյոթ տարեկան է,արդեն ձևավորված ազգային արժեքների կրողն է: Դ. Դեմիրճյանի <<Վարդանանքը>> ուսումնասիրելիս նա խոսում,գրում,մտածում է Վարդանին պատշաճ լեզվով»:

Ինչպես հեղինակն է ասում. <<Հերոսությունը հարգվում է ու երգվում,որովհետև հերոսության մեջ արյուն կա: Ամեն մարդ չի հերոսանում:Երբեմն մի մադու պատահում է ոտքը դնել հերոսության ուղու վրա : Կայծակում է հերոսությունը,մի վեհ գաղափարի համար՝ ազատության,այդ ամենասուրբ բանի համար աշխարհում կանգնում է մարդը. . . >>:

Աշխատանքները կատարելիս բանավոր հարցման ու գրավոր աշխատանքների համար աշակերտները գնահատվել են:

Ուշագրավ է,որ աշակերտների մոտ վերջում նկատվել էր առանձակի վրեժխնդրության զգացում:

Արտադասարանական ընթերցանության ժամանակ պարզվեց,որ աշակերտների մոտ հետաքրքրություն առաջացավ՝ ուսումնասիրելու ժամանակակից գրողների ստեղծագործությունները:

Աշակերտները յուրաքանչյուր դասին գնահատվել են ինչպես միավորային սանդղակով,այնպես էլ ձևավորող գնահատականներով:

Դիտարկելով հետազոտության ընթացքը՝պետք է ասել,որ յուրաքանչյուր դասընթաց առանձնահատուկ էր,փորձարարական և հետաքրքիր

:Կատարված աշխատանքների ժամանակ կիրառված մեթոդներն ու հնարները տեղին էին ու նպատակային:

Պայմանավորված աշակերտների անհատական ունակություններով աշխատանքը կարելի է գնահատել դրական,իսկ վերջնարդյունքը՝ բավարար:

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա ,որն անկասկած շատ մեծ նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի համար: Յուրաքանչյուր անձի արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը , որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նվաճումների համար հպարտության զգացում:Խոսքը գնում է ազգային արժեքային համակարգի ձևավորման մասին հայ գրականության դասերին: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, հատկապես՝ գրականություն առարկան: Դպրոցում սովորողները հայ գրականության ծրագրի շրջանակներում ծանոթանում են հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին,ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի դժվարություններին ու կորուստներին: Հայ գրականություն առարկայի ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է ազգային դիմագիծ, պետականամետ մտածելակերպ ունեցող հայ ժողովուրդի և հայոց պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձ ու քաղաքացի:Այդ իսկ պատճառով արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա,որ որպես հայ ո՞րն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում, իր մայր հողում, իր երկրում:Ազգային գաղափարախոսությունը պետք է հուշի սեփական պատմական առաքելությունը,որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով:

Հենց սա է պատճառը , որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը,իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարությունը, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրությունների վրա:

Գրականության ցանկ

1.Солонин Ю. Н. Культурология, StudMe.org 2013, էլեկտրոնային աղբյուր՝ https://studme.org/173403084784/kulturologiya/kulturologiya

2.Փախչանյան Ա. Դպրոցը, արժեքները և տարատեսակ «ազատությունները», Դեկտեմբերի 12, 2018,էլեկտրոնային աղբյուր՝ https://mediamax.am/am/column/12925/

3.Леонтев Д. А., Развитие личностных ценностей в общественном контексте, Вестник МосковскогоУниверситета. Сер. 14. Психология. 1997. №1

4.Ռոդարի Ջ. «Ստեղծագործական երևակայության քերականություն», Էլեկտրոնային աղբյուր՝https://lib.mskh.am/images/books/rodari.pdf

https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

5. Դոլուխանյան Ա., Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Երևան, 2006, էջ 63-66:

6.Ջեյնալյան Ն. Անձի արժեհամակարգի ձևավորման աշխարհայացքային նախադրյալները, Հանրային կառավարում 3-4/2017, էլեկտրոնային աղբյուր՝ https://www.bok.am/sites/default/files/2020-12/2.pdf

7.Դպրոցական արժեքները. Բնութագրերը, օրինակները, կարևորությունը, էլեկտրոնային աղբյուր՝ https://hy.warbletoncouncil.org/valores-escolares-5643

8.Վ.Կիրակոսյան, Ջ. Ավետիսյան .,Հայ գրականություն>>.11-րդ դասարան, Երևան 2015

9.Դ. Դեմիրճյան <<Վարդանանք >> պատմավեպը ,Երևան 1987